



COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ԽՁԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓԵՐ

Այս և պատվաստման վերաբերյալ այլ ՀՏՀ-ների փաստաթղթերն առցանց տեսնելու համար այցելեք [COVID-19-ի դեմ պատվաստման կայքէջ](#):

Ո՞ր և են խորհուրդ տրվում COVID-19-ի դեմ խթանիչ դեղաչափերը

CDC-ն հորդորում է, որ 12 տարեկան և ավելի բարձր տարիքի բոլոր անձինք ստանան խթանիչ դեղաչափ՝ COVID-19-ից լավագույնս պաշտպանվելու համար: Բացի այդ, ավելի բարձր վտանգի գոտում գտնվող որոշ մարդիկ կարող են իրենց ցանկությամբ ստանալ 2-րդ խթանիչ դեղաչափը: (Տե՛ս ստորև [Ո՞վ կարող է ստանալ 2-րդ խթանիչ դեղաչափ](#)): Ներկայումս խթանիչ դեղաչափերը թույլատրված չեն 5-11 տարեկան երեխաներին:

COVID-19-ի դեմ պատվաստանյութի խթանիչ դեղաչափը ստանալը կարևոր է, քանի որ այն ամրապնդում է ձեր դիմադրողականությունը: Այն ձեզ համար ապահովում է ավելի լավ պաշտպանություն ծանր հիվանդանալուց, հիվանդանոցում հայտնվելուց և նույնիսկ մահանալուց:

Ե՞րբ են ես իրավասու ստանալ խթանիչ դեղաչափ

- Եթե դուք 12 տարեկան եք կամ ավելի բարձր տարիքի, դուք իրավասու եք ստանալ խթանիչ դեղաչափ՝
 - Johnson & Johnson (J&J) պատվաստանյութի միակ դեղաչափից 2 ամիս անց կամ
 - Moderna կամ Pfizer պատվաստանյութի 2-րդ դեղաչափից 5 ամիս անց:
 Խթանիչ դեղաչափը կարող է լինել COVID-19-ի դեմ ցանկացած պատվաստանյութ, սակայն Նախընտրելի են Pfizer կամ Moderna պատվաստանյութերը: 12-17 տարեկան երեխաները կարող են ստանալ միայն Pfizer պատվաստանյութի խթանիչ դեղաչափը:
- Եթե դուք ունեք միջին կամ խիստ իմունային անբավարարություն, դուք պետք է ավելի շուտ ստանաք ձեր խթանիչ դեղաչափը: Ավելին իմանալու համար տե՛ս CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստումը Միջին Կամ խիստ Իմունային Անբավարարություն Ունեցող Մարդկանց Համար](#) կայքէջը:
- Եթե դուք պատվաստվել եք ԱՄՆ-ից դուրս, այցելեք CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստումը ԱՄՆ-ից Դուրս Պատվաստված Անձանց Համար](#)՝ տեսնելու, թե երբ եք իրավասու ստանալ խթանիչ դեղաչափ:

Ո՞վ կարող է ստանալ երկրորդ խթանիչ դեղաչափ

Հետևյալ մարդիկ կարող են ստանալ COVID-19-ի դեմ 2-րդ խթանիչ դեղաչափը, *եթե անցել է առնվազն 4 ամիս* 1-ին խթանիչ դեղաչափը ստանալուց հետո.

- 50 տարեկան և ավելի բարձր տարիքի
- 18-49 տարեկան անձինք, ովքեր ստացել են J&J պատվաստանյութի հիմնական և J&J պատվաստանյութի խթանիչ դեղաչափերը
- 12 տարեկան և ավելի բարձր տարիքի և [միջին կամ խիստ իմունային անբավարարություն ունեցող](#)

Խնդրում ենք դիմել ձեր բժշկին, եթե ունեք հարցեր այն մասին, թե արդյոք դուք պետք է ստանաք





COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ԽՁԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓԵՐ

Երկրորդ խթանիչ դեղաչափ:

Ե՞րբ պետք է ստանամ երկրորդ խթանիչ դեղաչափը

Եթե դուք գտվում եք այն խմբում, ովքեր կարող են ստանալ 2-րդ խթանիչ դեղաչափ, կարող եք ձեր ցանկությամբ ստանալ այն հենց հիմա կամ սպասել: Հաշվի առեք ձեր առողջական վիճակը և վտանգներն ու օգուտները: Ձեր բժիշկը կարող է օգնել ձեզ դիտարկել ձեր տարբերակները: Այս պահին ձեզ անհրաժեշտ չէ երկրորդ խթանիչ դեղաչափ, որպեսզի ձեր COVID-19-ի դեմ պատվաստման կարգավիճակը համարվի [արդիական](#):

Որոշ գործոններ կարող են ավելի հավանական դարձնել COVID-19-ի հետևանքով ձեր ծանր հիվանդանալը: Եթե դուք իրավասու եք ստանալ երկրորդ խթանիչ դեղաչափ, ապա կարող է օգտակար լինել այն ստանալ *հիմա*, եթե դուք (կամ ձեզ հետ ապրող որևէ անձ)

- Ունեք միջին կամ խիստ իմունային անբավարարություն
- [Ավելի մեծ հավանականությամբ ծանր կհիվանդանաք COVID-19-ի հետևանքով](#)
- Ավելի մեծ հավանականությամբ կշփվեք COVID-19-ի վարակի հետ ձեր աշխատանքի, ձեր բնակության վայրի կամ այլ գործոնների միջոցով (օրինակ՝ հաճախակի ճանապարհորդելը կամ մեծ հավաքույթների մասնակցելը)
- Գտնվում եք COVID-19-ի փոխանցման զգալի և բարձր մակարդակ ունեցող տարածքում
- Եթե ձեզ հետ ապրող որևէ անձ պատվաստված չէ

Դուք կարող եք *սպասել* նախքան 2-րդ խթանիչ դեղաչափը ստանալը, եթե դուք՝

- Վերջին 3 ամսվա ընթացքում վարակվել եք COVID-19-ով
- Առողջ եք և սահմանափակ շփում ունեք ուրիշների հետ

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս CDC-ի՝ [COVID-19-ի դեմ 2-րդ խթանիչ դեղաչափով Պատվաստման](#) կայքէջը: Հարցերի դեպքում խոսեք ձեր բժշկի հետ:

Որո՞նք են խթանիչ դեղաչափ ստանալու վտանգները

Խթանիչ դեղաչափերին հաջորդող ազդեցությունները նման են հիմնական դեղաչափերին հաջորդող ազդեցություններին: Կողմնակի ազդեցություններից շատերը մեղմ և չափավոր են և տևում են 2 օր կամ ավելի քիչ: Ինչպես հիմնական պատվաստանյութերի շարքը ստանալու դեպքում, լուրջ կողմնակի ազդեցությունները հազվադեպ են դրսևորվում: Լրացուցիչ մանրամասների համար այցելեք CDC-ի՝ [COVID-19-ի դեմ Պատվաստման Անվտանգությունը](#) կայքէջ: Խթանիչ դեղաչափ ստանալու առավելությունները գերազանցում են բոլոր հայտնի և հնարավոր վտանգները:

Արդյո՞ք ես պետք է ներկայացնեմ բժշկի գրություն կամ դեղատոմս խթանիչ դեղաչափ ստանալու համար

Ոչ, ձեզ հարկավոր չէ բժշկի գրություն կամ դեղատոմս խթանիչ դեղաչափ ստանալու համար: Դուք կարող եք ինքնուրույն հաստատել (self-report), եթե իրավասու եք: Երբ գնում եք որևէ





COVID-19-ի դեմ Պատվաստում. Հաճախ Տրվող Հարցեր ԽՁԱՆԻՉ ԴԵՂԱՉԱՓԵՐ

հաստատություն, վերցրեք պատվաստման ապացույցը, օրինակ՝ ձեր CDC-ի սպիտակ քարտը կամ պատվաստման թվային քարտը: Լրացուցիչ տեղեկությունների համար այցելեք Հանրային Առողջության Վարչության [Ինչպես պատվաստվել](#) կայքէջ:

Որտեղի՞ց կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկություններ



- Այս ՀՏՀ-ն կամ COVID-19-ի դեմ պատվաստման այլ թեմաների վերաբերյալ ՀՏՀ-ները տեսնելու համար սկանավորեք QR ծածկագիրը կամ այցելեք [COVID-19-ի դեմ պատվաստման ՀՏՀ-ները](#) կայքէջ:
- CDC-ի կայքէջ՝ [COVID-19-ի դեմ Պատվաստանյութի Խթանիչ Դեղաչափեր](#)
- [VaccinateLACounty.com](#)՝ ներառյալ [COVID-19-ի դեմ Պատվաստման Ժամանակացույցը](#), որն աղյուսակներով ցուցադրում է պատվաստման յուրաքանչյուր դեղաչափի ընդունման ժամանակը և տեղեկություններ է տրամադրում այն մասին, թե [Ինչպես Պատվաստվել](#):
- Հարցերի դեպքում խոսեք ձեր բժշկի հետ

